ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1.Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Անուշ Մեժլումյան, ՀՀ ֆինանսների նախարարության եկամուտների քաղաքականության և վարչարարության մեթոդաբանության վարչության եկամուտների քաղաքականության և հարկային վարչարարության մեթոդաբանության գլխավոր մասնագետ

2. Գործուղման վայրը և ժամկետները.

ք. Վիեննա, Ավստրիայի Հանրապետություն, 2025 թվականի փետրվարի 10-ից մինչև փետրվարի 14-ը

3. Հրավիրող կողմը.

Ավստրիայի իշխանություններ

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

«Մրցակցություն, աճ և ճգնաժամ» («Competitiveness, Growth and Crisis») թեմայով գործուղման նպատակն էր հետազոտությունների և վերլուծությունների միջոցով բացահայտել տնտեսությունը հավասարակշիռ վիճակում պահելու, համապատասխան ներառական աճ ապահովելու, ներառական աճն ապահովող հատվածների (Հարկաբյուջետային քաղաքականություն, Աշխատաշուկա և տեխնոլոգիա, Կառավարում, Կլիմայի փոփոխություն) արդյունավետ զարգացման, տնտեսական ճգնաժամերը հաղթահարելու նպատակով հարկաբյուջետային քաղաքականության մշակման և արդյունավետ կիրառման գործիքակազմի ընտրությունը:

5. Քննարկված թեմաները (հարցերը).

Դասընթացի ընթացքում, մասնավորապես, քննարկվել են հետևյալ թեմաները.

- Մրցակցություն, աճ և ճգնաժամ,
- Ներառական և կայուն արդյունաբերական զարգացում, կայուն զարգացման նպատակներ,

- Արտադրության միջոցների, աշխատուժի արտադրողականության գնահատման ցուցանիշների վերլուծություն,
- Արդյունաբերական նորարարության համակարգերի ախտորոշում,
- Աճի խթանման նպատակով արտադրողականության բարձրացմանը նպաստող ռեսուրսների ճիշտ բաշխման վերլուծություն,
- COVID 19-ի ընթացքում իրականացված աշխատատեղերի պահպանման ծրագրերի ազդեցությունը զբաղվածության և արտադրողականության վրա,
- Մրցակցության առաջնայնությունները և խոչընդոտները, մրցակցության նոր մոդելների և քաղաքականության վերլուծություն,
- Գլոբալիզացիայի անցյալը, ներկան և ապագան,
- Առևտրային քաղաքականություն և մրցակցություն,
- Ներդրումային ռազմավարության մշակում,
- Կանաչ հարկման մարտահրավերներն ու հնարավորությունները: Ածխածնի հարկի ներդրման առանձնահատկությունները:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկման հարցերը.

Դասընթացի ընթացքում առանձին հանդիպումներ և ելույթներ նախատեսված չէին:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Դասընթացի ընթացքում որևէ որոշումների ընդունում կամ փաստաթղթի ստորագրում նախատեսված չէր:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Դասընթացի ընթացքում ձեռք բերված գիտելիքները, ինչպես նաև դասախոսությունների ուսումնասիրությունը հնարավորություն կտան եկամուտների քաղաքականության և վարչարարության մեթոդաբանության մշակման գործընթացը դարձնելու առավել արդյունավետ:

Ստորագրությունը, ամսաթիվը: *19 փետրվարի 2025թ.*